

ՆԵՐՓԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Միջնակարգ դպրոցների ընդունելության քննութիւնների վերացումը և ուսուցիչներին վարձատրութեան հարցը.—Հասարակութեան և դպրոցի մէջ եղած կապը.—Ինչպէս վճարեց ֆինանսների մինիստրութիւնը այդ հարցը.—Առևտրական դպրոցների կազմակերպութեան խելացի հիմքը.—Հոգաբարձական խորհուրդը.—Մեր տաղգալին մանկավարժ-վարիչներին մի տարօրինակ ընդունակութիւնը.—Ինչ ճանապարհով պէտք էր փոփոխութիւններ մտցնել մեր թեմ. դպրոցներում գոյութիւն ունեցող կանոնադրութիւնների մէջ.—Իրաւունք և քմահաճոյք.—Իրաւական կարգերի առաւելութիւնը.—Վառավարչական սենատի մի որոշում:

Պ ա շ տ օ ն ա կ ա ն հ ա ղ ո Ր Գ ա գ Ր Ո Ւ Թ Ի ւ ն ե Ր. Պալօվի գիւղի աղանդաւորների գործը.—Ցույցեր ֆինլանդիայում.—ԷՅԱՅԿԱՅԵՆ-ի հաղորդածը.—Ֆինլի պօլիտեխնիկումի փակումը.—Ուսանողական անկարգութիւններ Մոսկուայում.—Քիւրճահալ փախստականների մասին կարգադրութիւն:

Անցեալ տարի մեր մի տեսութեան մէջ (№ 7) առիթ ունեցանք խօսել լուսաւորութեան մինիստրութեան միջնակարգ դպրոցների համար ծրագրուած ընդունելության մասին: Այս 1901—1902 ուսումնական տարին առաջինն էր, որի ընթացքում սկսել էին գործադրել նոր ծրագիրը ստորին դասարաններում: Բացի ծրագրի փոփոխութիւնից այժմ զանազան մասնաժողովներում պատրաստուած են և այլ ընդունելության ուրուագծեր: Իրականացած բարենորոգումներից մէկն էլ դասարանից դասարան փոխադրուելու համար քննութիւնների վերացումն է: Հէնց այս ուսումնական տարուայ վերջում պէտք է գործադրուեն դպրոցական կենտրոնի այդ կարևոր մասում նոր կանոններ, որոնց հետ աւելորդ չենք համարում ծանօթացնել մեր ընթերցողներին, օգտուելով մայրաքաղաքների լրագրների տուած տեղեկութիւններից *):

*) Ներուի լիշել որ Դուշուալ թեմ. դպրոցում 1892—1894 ուս. տ.տ. ընթացքում մտցրուած էին փոխադրական քննութիւնների տեղ նման կանոններ:

Գիմնազիաների, պրոգիմնազիաների, ընդհանուր և իզական դպրոցների այն աշակերտները, որոնց ընդհանուր տարեկան թուանշանը իւրաքանչիւր առարկայից երեքից (3) պակաս է, փոխադրոււմ են յաջորդ դասարան առանց քննութեան: Այն աշակերտները, որոնք ստացել են անբաւարար թուանշաններ (2 կամ 1) տարեկանում մէկ կամ երկու գիտական առարկաներից, իսկ ընդհանուր դպրոցներում նաև գծագրութիւնից և նկարչութիւնից, կարող են քննութիւն տալ միայն այդ առարկաներից: Միայն բացառիկ դէպքերում մանկավարժական խորհուրդը, այն էլ ուսումնարանական շրջանի հոգաբարձուի առանձին թոյլտուութեամբ, իրաւունք ունի այդպիսի աշակերտներին պահել դասարանում առանց վերատուգոյցական հարցաքննութեան: Այն աշակերտները, որոնք անբաւարար թուանշաններ ունեն աւելի քան երկու գիտական առարկաներից՝ առանց քննութեան պահուում են դասարանում: Սակայն բացառիկ դէպքերում մանկավարժական խորհուրդը, ուսումնարանական շրջանի հոգաբարձուի թոյլտուութեամբ, կարող է այդպիսի աշակերտներին էլ փոխադրական հարցաքննութեան ենթարկել (միայն անբաւարար թուանշաններ ստացած առարկաներից): Այդ բոլոր քննութիւնները կատարուում են արձակուրդից յետոյ, աշնանը, իսկ դարձանը՝ փոխադրական քննութիւններ, դպրոցական պարապմունքները վերջացնելուց յետոյ, թոյլատրուում են միայն առանձին յարգելի պատճառներով, բացառիկ դէպքերում, այն էլ միայն մի անբաւարար թուանշան ունեցող աշակերտների համար: Այդ փոփոխութիւնները չեն վերաբերում ընդունելութեան, աւարտման և վերջնական քննութիւններին:

Յիշած բեֆօրմը անշուշտ մի առաջադէմ քայլ է դպրոցական կեանքում, որովհետև բոլորովին աւելորդ, ձևական և փնասակար ժամավաճառութիւն էր՝ ամբողջ տարուայ ընթացքում ուսուցչից բաւարար գնահատուած աշակերտին ստիպել նորից քննուել նրա առարկայից և մի քանի րոպէ տևող հարցուփոփոքներից, երբեմն պատահական պատճառներով անբաւարար պատասխանների հիման վրայ, փոխել ամբողջ տարուայ եղրակացութիւնը աշակերտի առաջադէմ կամ թոյլ լինելու մասին:

Ինչպէս յայտնի է միջնակարգ դպրոցների կեանքում բեֆօրմ է մտցնուելու և ուսուցչական աշխատանքի վարձատրութեան մէջ: Այդ հարցը քննող մասնագէտով, ինչպէս յայտնուում են լրագրները, արդէն վերջացրել է իր պարապմունքները և մշակել է հետեւեալ պրօէկտը.

Այժմ դասավանդի գոյութիւն ունեցող սիստեմը,—60 ռուբլի տարեկան մի դասի համար ծառայութեան սկզբում և

75 ուրբլի հինգ տարուց յետոյ,—փոխարինւում է տարեկան ոռոգով. 900 ուրբլի ծառայութեան սկզբում, շաբաթական 12 դաս տալու պարտաւորութեամբ. դասերի այդ թուից աւելի ուսուցիչը կարող է տալ ևս 6 լրացուցիչ դաս, իւրաքանչիւրի համար տարեկան 75 ուրբլի վարձատրութեամբ. իւրաքանչիւր հինգամսակից յետոյ ոռոգիլը բարձրանում է. առաջին և երկրորդ հինգամսակից յետոյ աւելանում է 200-ական ուրբլի, երրորդ և չորրորդ հինգամսակից յետոյ 300-ական ուրբլի. Քսան և հինգ տարուայ ծառայութիւնից յետոյ, եթէ ուսուցիչը մնայ ծառայութեան մէջ, բացի ոռոգից այժմեան նման նաև կենսաւթոշակ չի ստանալ. Այդ դուցէ ստիպի զառամեալներից շատերին հեռանալ ծառայութիւնից և տեղ բացել աւելի թարմ ոյժերի համար. Իսկ 25-ամեայ ծառայութիւնից յետոյ ասպարէզից հեռացած ուսուցիչը կը ստանայ կենսաւթոշակ 1800 ուրբլի. Բացի դասատուութեան համար նշանակած վարձատրութիւնը, իւրաքանչիւր նօրմալ եօթդասարանեան միջնակարգ դպրոցում ուսուցիչներից 6-ը նշանակւում են իւրև դասարանական դաստիարակներ (եօթերորդը ինքը վերատեսուչն է), որոնք նոյն պարտաւորութիւններն են կրելու, ինչ և այժմ և, բացի այդ, նրանց վրայ է դնուելու այժմեան վերակացուների պարտաւորութիւնները, իսկ առանձին վերակացուների պաշտօնը վերացուելու է,—և այդ դասարանական դաստիարակութեան համար իւրաքանչիւրը ստանալու է 650 ուրբլի. Գիշերօթիկներ պահող դպրոցներում իւրաքանչիւր 15 գիշերօթիկ աշակերտի համար նշանակուելու է 1 դաստիարակ. դրանց պարտաւորութիւնները, ինչպէս և վարձատրութեան չափը, մնալու են առաջուանը. Ասածներից պարզ է որ 12 դաս, 6 լրացուցիչ դասեր և դասարանական դաստիարակութիւն ունեցող ամեն մի ուսուցիչ ստանալու է ծառայութեան առաջին հինգամսակում $900 + 450 + 650 = 2000$ ուրբլի, երկրորդում՝ 2200, երրորդում՝ 2400, չորրորդում՝ 2700 և հինգերորդում 3000 ուրբլի. Առանձին վարձատրութիւն սահմանում է և զբաղարանապետութեան, մանկ. ժողովի քարտուղարութեան և աշակերտների զբաւոր աշխատանքները ուղղելու համար.

Այդպիսով ուսուցիչների նիւթական կացութիւնը բաւականաչափ բարւոյւնում է և, որքան դէպի մանկավարժական գործունէութիւնը ընդունակ ու արժանաւոր մարդիկ գրաւելու հարցը կախուած է տնտեսականից՝ այդ պայմանը ստեղծուած է. Մնում է մանկավարժական գործունէութեան ընդհանուր, ոչ-նիւթական, պայմաններն ևս այնպէս փոխել, որ նա աւելի

գրուելի, աւելի կենդանի դառնայ և ուսուցչի անձնական նախաձեռնութիւնը ու ոգևորութիւնը գտնեն ազատ գործադրութիւն:

Մենք մի անգամ արդէն առիթ ենք ունեցել (1901 թ. № 1) յիշատակել, որ լուսաւորութեան միջնատրութիւնը ինքը չեշտում է միջնակարգ դպրոցների մանկավարժական և տնտեսական խորհուրդների մէջ կօլլեզիալ սկզբունքների գործադրութեան բացակայութիւնը, որի շնորհիւ վերատեսչի միահեծան կամքն է գերիշխողը այդ կրթական հիմնարկութիւնների մէջ: Այժմ էլ միջնակարգ դպրոցի բարենորոգման առիթով եղած խորհրդածութիւնների մէջ չի մոռացւում որ միջնատրական դպրոցները այժմ հասարակութիւնից բալորովի կղզիացած կեանքով են ապրում և ծնողները ոչ մի միջոց չունեն ազդելու և իրանց լաւագոյն տենչանքները հողորդելու՝ իրանց զաւակների միտքը և բնաւորութիւնը կազմակերպող այդ հիմնարկութիւնների վրայ:

Այդպէս ահա մինչ հարցի այդ կողմ դեռ քննութեան առարկայ է և *pia desideria* հասարակութեան համար—առեւտրական դպրոցներում, որոնք յանձնուած են ֆինանսների միջնատրութեան կառավարութեան, 1896 թուականի ապրիլի 15-ի կանոնադրութեամբ արդէն աջող կերպով լուծուած կարող է համարուել: Յայտնի է որ, այդ կանոնների համաձայն, առևտրական դպրոցների հիմնադիրները իրաւունք ունեն իրանց միջից ընտրել հոգաբարձական խորհուրդ, որը ոչ միայն դպրոցի տնտեսական, այլ և մանկավարժական-վարչական հարցերում ունի ձայն. այդ խորհրդի իրաւունքն է՝ վերատեսչութեան պաշտօնի համար թեկնածու ընտրել. իսկ այդ ղեկավարից չէ որ մեծ բան է կախուած դպրոցում: Բացի այդ, հոգաբարձական խորհրդի հաւանութեամբ են զուգընթաց դասարաններ բացւում, նա ունի իրաւունք մասնակցել մանկավարժական խորհրդներում ևայլն: Այդպիսով դպրոցի և հասարակութեան մէջ մի սերտ կապ է հաստատուում, դրանց մէջ փոխադարձ շփում է առաջանում, որի շնորհիւ դպրոցը չի կորուում չրջապատող կեանքից, չի քարանում մեռած ձեւականութեան և բիւրօսկրատիական բուռնիայի մէջ, այլ պահպանում է միշտ կենսաթրթիւ թարմութիւն և շարունակ առաջադիմելու, կատարելագործուելու ընդունակութիւն:

Լախ կերպով ըմբռնելով իր դերը ֆինանսների միջնատրութիւնը չուզեց նեղ, մանրակրկիտ բեզլամենտացիայի ենթարկել և առևտրական դպրոցների ծրագիրը: Երբ առևտրական դպրոցները, 6 տարի առաջ, անցան ֆինանսների միջնատրութեան տնօրի-

նութեան, սրա ուսումնական բաժինը, իբրև զլիաւոր, ղեկավար մարմին, չուղեց ամեն բան կենտրոնացնել իր ձեռքում և մշտական ու անպատեհ միջամտութիւններով վնասել գործին, այլ միայն ընդհանուր ձևով զօնեց առևտրական դպրոցների կազմակերպութիւնը և ծրագիրը, թողնելով տեղական գործիչներին, այդ դպրոցների հոգաբարձական և մանկավարժական խորհրդի նախաձեռնութեան, մանրամասնութիւնների մշակութիւնը: Այդ որոշ ապակենտրոնացումը, տեղական որոշ ինքնավարութիւնը դպրոցական հարցում, ուղղակի վերակենդանացնող դեր կատարեց առևտրական կրթութեան մէջ. 1896 թուից յետոյ, նոր կանոնների ոգու շնորհիւ, առևտրական դպրոցների թիւը Ռուսաստանում աւելի քան տասնապատկուեց, 10-ից հասաւ 120-ի: Առևտրական դպրոցների գործիչները առանձին ոգևորութիւն և եռանդ զգացին իրանց մէջ նուիրուելով նոր գործին: Անցեալ տարուայ յունիս ամսում և այս տարուայ յունուարի կիսում առևտրական կրթութեան ներկայացուցիչները գումարուեցին Պետերբուրգում և մի շարք խորհրդածութիւններ ունեցան իրանց գործունէութեան հետ կապ ունեցող բազմաթիւ հարցերի մասին որոշումներ կայացրին և, հոգեպէս թարմացած, բարոյապէս գոհացած իրանց նախաձեռնութեան, ինիցիատիւ արդիւնքներով, վերադարձան՝ աւելի ևս մեծ սիրով և աշխոյժով շարունակելու համար ստանձնած պարապմունքները:

Ահա ինչ է նշանակում հասարակութիւնը մասնակից առնել դպրոցական գործին և որոշ ազատութիւն տալ այդ ասպարէզում գործելու կոչում ունեցող ոյժերին:

Մեր վերև ասածներից դժուար չէ համոզուել որ Ռուսաստանի միջնակարգ դպրոցները ունեն և լաւ և վատ կողմեր. այս վերջինները բարւոքելու համար րարձր իշխանութիւնից զանազան մասնաժողովներ են նշանակուած, որոնք բազմակողմանի քննութեան են ենթարկում բոլոր մտցուելիք փոփոխութիւնները:

Այդպէս ահա էջմիածնի մեր «ազդային մանկավարժ-վարիչները» իրանց աչքի առաջ կարող էին ունենալ ոչ միայն դպրոցական լաւ կարգեր, այլ և պէտք է տեսնեն թէ ինչ ճանապարհով է կատարւում եղած կանոնների մէջ հիմնաւոր փոփոխութիւն:

Բայց արի տես որ մեր վարիչները մի առանձին ընդունակութիւն ունեն ընդօրինակելու զրօից միայն թոյլ, վնասակար և վատթար կողմերը: Մեր դպրոցական կեանքում հռչակուած triumvirat-ը, որոնցից այժմ միայն մէկն է մնացել այդ ասպար

բէզում, գործում էր բանականութեան հակառակ ուղղութեամբ. նա աշխատում էր ծայրագոյն այլանդակութեան հասցնել մեր դպրոցական կեանքի պակասաւոր, վատթար կողմերը և միաժամանակ խեղդել նրա մէջ եղած լաւագոյն տրադիցիաները, առաջադիմելու ընդունակ սաղմերը: Շնորհիւ այդ վարիչների տարօրինակօրէն բուծ և նեղ հասկացողութիւններին կարգ կանոնի մասին, շնորհիւ նրանց մշտափոփոխ, անսկզբունք, երերուն, հակասական ու քմահաճ վերաբերմունքին և դպրոցական ներքին կեանքի ամեն մի չնչին հարցի մէջ քիթ խծկելու, լրտեսելու սովորութեան՝ մեր դպրոցները առաջադիմելու փոխարէն յետադիմեցին: Մեր թեմական դպրոցները այժմ նման են ծովի քմահաճ ալիքներին մատնուած՝ անդեկ, վատ կազմակերպուած և պարիսնաւաստներով լքուած ողորմելի նաւերի...

Մեր կղերականները չեն ուզում ըմբռնել այն տարրական ճշմարտութիւնը որ այլ է իրաւական, օրինական կարգ, այլ է անձնապատասխան քմահաճոյք: Նրանք մոռանում են որ ոչ մի հասարակական կեանք չի կարող առաջադիմել, եթէ առանձին անհատների կամքը, քմահաճոյքը, չենթարկուի հաստատ, պարտաւորիչ կանոնների, իրաւական չափերի: Այդ է պահանջում հասարակական ամբողջութեան շահը, նրա առաջադիմութիւնը: Եւ այդ չափերը սահմանող իշխանութիւնը պարտաւոր է ինքը հսկել նրանց ուղիղ, անչեղ գործադրութեան վրայ և ոչ թէ երևակայել որ այդ չափերը իր, իշխանութեան, համար նշանակութիւն չունեն և ինքը, երբ ուղեց, կարող է ռոտակոխ անել նրանց:

Մենք քանիցս ասել ենք, դարձեալ կրկնում ենք, որ մեր թեմական դպրոցները ունեն հոգևոր ծայրագոյն իշխանութիւնից (Սինօդ, Կաթողիկոսի նախագահութեամբ), համաձայն Պօլօէնիայի 1004 յօդուածի, հաստատուած կանոնադրութիւններ, մենք ասել ենք որ ծայրագոյն իշխանութիւնը պէտք է հսկի որ զանազան ստորադրեալ պաշտօնեաներ, առաջնորդներ, յաջորդներ, չը շեղուն այդ իրաւական չափերից: Եթէ այդ կանոնները հարկաւոր են դատում փոփոխել՝ պէտք է այդ անել նոյն իրաւական կարգով, ինչ կարգով որ նրանք կազմուել են և հաստատուել: Իսկ մինչ այդ, դպրոցների կեանքի խաղաղ ընթացքը չը վրդովելու և կրթութեան տաճարը վայրագ կրքերի կրկէս չը դարձնելու համար, պէտք է ղեկավարուել միայն և միայն եղած կանոնադրութեամբ, ուր բաւականաչափ որոշ են թէ ծխականների, թէ հոգաբարձութեան և թէ մանկավարժական խորհրդի իրաւունքները: Այդ կանոնադրութեան մէջ գործի աջողութեան համար անհրաժեշտ ազատութիւն և խնդիրատիւ է

տուած տեսչին, մանկավարժական խորհրդի հետ, և հոգաբարձութեան:

Անշուշտ, լրացնել, կատարելագործել գոյութիւն ունեցող կանոնները միշտ կարելի է, բայց այդ պէտք է լինի ոչ այս կամ այն անհատի անձնական, փաշայական հրամաններով, այլ խորհրդակցութեամբ դպրոցական գործիչների. հոգաբարձուներից և մանկավարժական խորհուրդներից ընտրած մասնագողովներէ կողմից՝ հարցը նախօրօք պէտք է ենթարկուի լուրջ, բազմակողմանի ուսումնասիրութեան և պարզաբանութեան:

Այդ կանոնները սկզբում մշակուել են հասարակութեան ներկայացուցիչների մասնակցութեամբ, ուստի փոփոխելն էլ չը պէտք է լինի առանց նրա ձայնը լսելու:

Թող օրինակ լինի Էջմիածնի վարիչների համար հէնց այն կարգը, այն ճանապարհը, որին հետևում է լուսաւորութեան միջնատրութիւնը իր միջնակարգ դպրոցներէ մէջ փոփոխութիւն մտցնելիս. քանի՜-քանի՜ յանձնագողովների, մասնադէտ անձանց կարծիքների բովից է անցնում ամեն մի հարց, նախ քան բարձրագոյն, ղեկավար մարմնի հաւանութիւնը կամ որոշումը ստանալու իսկ մեր վարչապետները կարծում են որ իրանք ամենադէտ են, ի վերուստ օժտուած են առանձին, չնաչխարհիկ ամենադիտութեամբ և կարող են գիշերը քնել և առաւօտը վեր կենալ պատրաստ ծրագրներով, նախագծերով և որոշումներով...

Ոչ, հայր սուրբեր և սրբազաններ, դեռ ևս իրաւական, օրինական ճանապարհից աւելի ուղիղ միջոց մարդկութիւնը չի գտել առաջադիմելու համար: Թէ ինչ առաւելութիւն ունի այդ ճանապարհը ընդհանրապէս, այդ ասացուցւում է կառավարչական Սենատի հէնց այն որոշումով, որ զետեղում ենք ներքեւում, քաղելով «Մշակի» № 63-ից: Ահա այդ նշանաւոր իրողութիւնը.

«Երդուեալ հաւատարմատար Սոկրատ Մելիք-Աշամեան, որպէս Վրաստանի և Իմէրէթի հայ-լուսաւորչական թեմի կօնսիտատօրիայի հաւատարմատար, զանգատ ներկայացրեց Թիֆլիսի նահանգական դատարանին ժողովրդական լուսաւորութեան միջնատրութեան դէմ, յանձին կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուի, պահանջելով, որ ճանաչուի Ախալցխա քաղաքի ս. Փրկիչ եկեղեցու սեփականութեան իրաւունքը անշարժ կալուածի վրայ, որ բաղկացած է ութը գիւղերից Ախալքալաքի գաւառում: Ինչպէս յայտնի է, այդ կալուածները կովկասեան ուսումնարանական իշխանութիւնը իր իրաւասութեան ենթարկեց 1898 թուի մարտի 26-ին Միջնատրների Կօմիտէտի Բարձրագոյն

հաստատուած կանոնադրութեան հիման վրայ, որպէս հայոց եկեղեցական դպրոցներին պատկանող կալուածքներ

Այդ պահանջի դէմ, որ զնահատուած էր 400,000 ուսուցիչ, կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուն ներկայացրեց պատասխան, որի մէջ ասում էր, թէ այդ գործը ենթակայ չէ դատաստանական հիմնարկութիւններ ըննութեանը, ասպացուցանելով, թէ որովհետեւ հայոց եկեղեցու վարչութիւնը չէ առանձնացած որպէս առանձին հոգեւոր հաստատութիւն և մըտնում է ներքին գործերի միջնարկութեան կազմի մէջ, այդ պատճառով կալուածքներին վերաբերեալ ներկայ վէճը, որ ծագել է ներքին գործերի միջնարկութեան և ժողովրդական լուսաւորութեան միջնարկութեան միջեւ, Քաղաքացիական Դատաւարութեան կանոնադրութեան 1297-րդ յօդուածի հիման վրայ, պէտք է լուծուի ստանայ վարչական (ադմինիստրատիվ) կարգով:

Սակայն այդպիսի կարծիքի հետ չը համաձայնուեցին ոչ նահանգական դատարանը, ոչ էլ դատաստանական պալատը, որոնցից նահանգական դատարանը բաւարարութիւն տուեց ըստ էութեան, իսկ դատաստանական պալատը դադարեցրեց գործի ըննութիւնը ըստ էութեան, ի նկատի ունենալով, որ կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուն վճարեկ գանգատ է ներկայացրել Սենատին պալատի որոշման դէմ, որով հոգաբարձուի մասնաւոր գանգատը այն բանի մասին՝ թէ ներկայ գործը ենթակայ չէ դատաստանական հիմնարկութիւնների ըննութեանը, անհետեւանք թողնուեց:

Հոգաբարձուի վճարեկ գանգատի դէմ երդուեալ հաւատարմատար Ս. Մելիք-Աղամեան ուղարկեց Սենատ մի գրաւոր բացատրութիւն, որի մէջ նա ասպցուցանում էր, որ ներկայ գործի ըննութեան ժամանակ նշանակութիւն ունի ոչ թէ այն՝ թէ հայ-լուսաւորչական եկեղեցին արդեօք առանձին վարչութիւն է կազմում պետական կառավարչութեան կարգի մէջ, այլ այն, որ հայ-լուսաւորչական եկեղեցին արդեօք իրաւունք ունի սեփական եկեղեցական կալուածքներ ունենալ, թէ այդպիսիները պէտք է պատկանեն գանձարանին:

Այդ փորձը լուծուում է Օտար Դաւանութիւնների կանոնադրութեան 1213 և 1214 յօդուածների հիման վրայ, որոնց զօրութեամբ հայոց եկեղեցիների, վանքերի և նրանց պատկանող աստուածաճաճոյ հիմնարկութիւնների պահպանութեան համար նշանակուած բոլոր կալուածքները մնում են հայ-լուսաւորչական եկեղեցու և ոչ թէ գանձարանի սեփականութիւն, որից պէտք է հետեւին, որ հայոց եկեղեցու սեփականութեան իրաւունքին վերաբերեալ ներկայ վէճը չէ կարող այլապէս վճռուել, եթէ ոչ

դատաստանական կարգով, որ մասնացոյց է արուած Քաղաքացիական Դատավարութեան Կանոնադրութեան 1298-դ. յօդուածում—Այդ եզրակացութեան ճշմարտութիւնը հաստատուում է և 1898 թ. մարտի 26-ին Մինիստրների Կօմիտէտի Բարձրագոյն հաստատուած կանոնադրութեամբ, որով պատշտւորում է Կովկասի ուսումնարանական իշխանութեանը իր իրաւասութեան տակ առնել այն գոյքերը, որոնք պատկանում են հայոց եկեղեցական դպրոցներին, որպէս իրաւաբանական անձանց, որովհետեւ վերոյիշեալ Կանոնադրութեամբ հայ-լուսաւորչական հոգևորականութեան ներկայացուցիչներին իրաւունք է արւում վէճեր սկսել իրանց վերոյիշեալ գոյքերի մասին սովորական դատաստանական կարգով:

Մարտի 20-ին, չորեքշաբթի օրը, այդ գործը քննւում էր Կառավարչական Սենատի քաղաքացիական վճռաբեկ դեպարտամէնտում, ուր կօնսիստօրիայի շահերը պաշտպանում էր և երդուեալ հաւատարմատար Ս. Մելիք-Աղասեանի բացատրութիւնները ապացուցանում էր յայտնի երդուեալ հաւատարմատար Պ. Գ. Միրօնով:

Սենատը, լսելով ներկայ գործը և օբէրպոկուլորի եզրակացութիւնը, որոշեց.—Թիֆլիսի դատաստանական պալատի վճիռը վերոյիշեալ հարցի վերաբերմամբ հաստատել, անհետեւանք թողնելով Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուի վճռաբեկ գանգատը:

Այդպիսով, սրանից յետոյ հայոց կօնսիստօրիաների կողմից սկսած բոլոր վէճերը Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձութեան դէմ վերջնական լուծումն կը ստանան սովորական դատաստանական կարգով, որոնց մէջ գործերի մեծամասնութիւնը արդէն լուծուած է ի նպաստ հայոց եկեղեցու, բայց միայն դատարանի առաջին ինստանցիայում և ներկայումս այդ գործերը գտնւում են դատաստանական պալատում կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուի բողոքարկու գանգատներով:

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ